

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ և ՆՐԱՆՑ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

1

Ժամանակակից հայերենը ունի ավելի քան հիսուն բարրառներ և խոսքի վածքներ, որոնք XIX դարից սկսած ուսումնասիրության առարկա են դարձել ինչպես հայ, նույնպես և օտարալզի ուսումնասիրողների համար: Հայերենի բարրառների ուսումնասիրության դործը հատկապես լայն ծավալ ստացավ սովետական պայմաններում: Այժմ արդեն հրապարակի վրա են մի շարք մենագրական ուսումնասիրություններ, որոնք հիմք են տալիս հայագետներին դուրս գալու բարրառների նկարագրության շրջանակներից և առաջ քաշելու այնպիսի հարցեր, որոնք արծարծված չեն եղել մինչև այժմ, կամ քննված են տարբեր, ժամանակակից գիտության պահանջները չբավարարող դիրքերից: Այդ պրոբլեմներից մեկը հայերենի բարրառների ծագման հարցն է:

Ընդհանուր լեզվաբանության խոշորագույն մասնագետներից մեկը՝ Ա. Մեյլետը հայերենին նվիրած իր մի շարք ուսումնասիրությունների մեջ գտել է, որ հայերենի արդի բարրառները չունեն այնպիսի զծեր, որոնք հայտնի չլինեին զրարարին և կապին զրանց հնդեվրոպական հիմք լեզվի հետ: Ժամանակակից հայերենի բարրառները, նրա կարծիքով, առաջացել են զրարարից, հինգերորդ դարից հետո՝ իբրև նրա հետագա ձևափոխումների հետևանք:

Այդ կարծիքը պաշտպանելով, բաղմամաստակ հայագետ Հ. Աճառյանը կարծել է, որ «զրարարի ամենահին ձևը հնդեվրոպական նախալեզուն է, որ և հայերեն լեզվի ելակետն է»². և որ արդի բարրառները չեն ներկայացնում այնպիսի ձևեր, որոնք «ձայնարանորեն կարող չլինեին առաջանալ զրարարի ձևերից և ավելի հին լինեին, քան զրարարի ձևերը»³: Նա հաշվի առնելով հինգերորդ դարի հայ մատենագիրների վկայությունները՝ գտնում է նաև, որ հինգերորդ դարում հայ ժողովրդի բոլոր հատվածները չեն խոսել միևնույն բարրառով, բայց այդ «բարրառները իրարից խիստ կերպով զանազանված չէին և կարելի է նրանք ավելի ենթարարառ կոչել, քան բարրառ»⁴:

Հայերենի բարրառների առաջացման այդ տեսությունից տարբերվում է պրոֆ. Ա. Ղարիբյանի պաշտպանած տեսակետը, որը նա շարադրել է ինչպես իր բարրառագիտական հետազոտություններում, նույնպես և «Պատմա-բանասիրական հանդեսում» և «Вопросы языкознания» ամսաթերթում տպագրած ողվածներում: Նրա կարծիքով «Հայ միասնական ցեղի քայքայումից հետո,

¹ Հմմտ. A. Meillet, Esquisse d'une grammaire compare de l'armenien classique, էջ XI—XV:

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. II, էջ 363:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

հայերեն լեզվի մեջ գոյություն ունեցող բարբառային սաղմերը ակտիվացել են և վերածվել բարբառային որոշակի տարրերի ղեռ հնագույն ժամանակներից և այն էլ, ինչպես ցույց են տալիս մեր փաստերը, մեր դարաշրջանից առաջ երկրորդ հազարամյակի վերջերից: Մեր կարծիքով, մեր դարաշրջանից առաջ, առաջին հազարամյակի սկզբում կազմվել են մեր հիմնական բարբառները, որոնք հետագայում ավելի ու ավելի տարրերով են միմյանցից, ճյուղավորվել են, միմյանց համադրվել առանձին մասերով, հիմնական մասով միմյանցից ավելի հեռացել, հաճախ որոշ հատվածներով իրար միացել և այս ձևով շարունակել իրենց գոյությունը մինչև նոր ժամանակները: Հայկական ֆեոդալիզմի ստեղծման և զարգացման զուգընթաց հին բարբառները զգալի փոփոխություններ են կրել: Նրանք իրենց ներսում բաժանվել են նոր բարբառների՝ առաջացնելով բարբառային ճյուղեր: Դրա հետևանքով է, որ այժմ մենք հայտնաբերում ենք շուրջ վաթսուն բարբառներ»¹:

Հայ բարբառների ծագման այս տեսակետի ղեմ արտահայտվեցին լեզվաբաններ է. Աղայանը, Գ. Սևակը և Գ. Զահուկյանը՝ «Պատմա-բանասիրական հանդեսում» իրենց տպագրած հոդվածներով: Նրանք հիմնականում սլաշտ-սլանելով Ա. Մեյեի և Հ. Աճառյանի կարծիքը հայերենի բարբառների մասին՝ ընդունեցին, որ «գրաբարը ավելի արխայիկ վիճակ է ներկայացնում և ավելի մոտ է հնդեվրոպական հիմնալեզվի վիճակին, քան բարբառներից որևէ մեկը»²: «Հայերեն բարբառներից և ոչ մեկն էլ գրաբարից հին չէ: Բոլոր հայերեն բարբառները ներկայացնում են գրաբարյան համակարգի հետագա զարգացումը՝ տարբեր ուղղություններով ու ձևափոխություններով»³: «Գրաբարն ավելի հնատիպ է ու հին, քան մեր բարբառներից որևէ մեկը, հետևաբար, մեր բարբառներն առաջացել են գրաբարի կազմավորումից հետո և հենց գրաբարից, որ հին հայերենի գրավոր ավանդված վիճակն է»⁴: «Մեզ ծանոթ բոլոր հայ բարբառների հնչյունական և քերականական համակարգը հին հայերենի՝ գրաբարյան համակարգից է սերել և չի կարող ավելի հին լինել նրա համակարգից»⁵:

Ընդգծելով հայոց լեզվի պատմության կարևորագույն, բայց դեռևս չուծված պրոբլեմներից մեկի՝ հայ բարբառների ծագման հարցի մասին «Պատմա-բանասիրական հանդեսի» բացած բանավեճի և այդ առթիվ տպագրված հոդվածների կարևորությունը՝ մենք կարծում ենք, որ այդ պրոբլեմի վերջնական ու ճշգրիտ լուծումը պահանջում է ոչ միայն լեզվապես, այլև պատմական, հնագիտական, ազգագրական, ինչպես նաև հարևան ժողովուրդների լեզուների տվյալների հաշվառումը, որոնց վրա, ցավով պետք է նշել, քիչ է ուշադրություն դարձվել մինչև այժմ:

2

Պրոֆ. Հ. Աճառյանը, ինչպես մենք տեսանք, կարծում էր, որ հայերենը նույնիսկ հինգերորդ դարում չի ունեցել իր բարբառները: Այդ հարցին անդրա-

¹ Ա. Ղաբիրյան, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1938, № 3, էջ 241:

² Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության և հայերենի բարբառների ծագման հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 305:

³ է. Աղայան, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1938, № 2, էջ 223:

⁴ Նույն տեղում, էջ 222:

⁵ Գ. Սևակ, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1939, № 1, էջ 244:

դառնում են նաև վերոհիշյալ հայագետները՝ Հանդեսում տպագրած իրենց հոդվածներում, աշխատելով ուրույն մոտեցում ցուցաբերել այդ խնդրի լուծմանը՝ Պրոֆ. Ա. Ղարիրյանը գտնում է, որ արդի հայերենի բարրառները իրենց հիմնական կերպարանքով ձևավորվել էին դեռևս երկու հազարամյակ մեր թվականությանից առաջ, հետևաբար, նրանք ղոյություն ունեն մեր թվականության հինգերորդ դարում՝ Պրոֆ. Է. Ալալյանը հաստատում է, որ անհրաժեշտ է տարբերել հին հայերեն բարրառներ, որոնք մեր թվականությանից առաջ XV—XIV դարերից սկսել են մահանալ, և նոր հայերեն բարրառներ, որոնք սկսել են սաղմնավորվել IV—V դարերից, երբ ամբողջապես մահացել են հին հայերեն բարրառները¹։ Պրոֆ. Գ. Սևակը վիճարկելով պրոֆ. Է. Ալալյանի հին ու նոր հայերեն բարրառների ղոյության թեզը՝ գտնում է, որ մեզ ծանոթ բոլոր հայերեն բարրառները առաջացել են զրաբարյան համակարգից²։ Պրոֆ. Գ. Զա- հուկյանը սխալ համարելով «այն կոնցեպցիան, թե մեր ժամանակակից բարրառները ծագում են զրաբարից»³, գտնում է, որ «ընդհանուր առմամբ վերցրած զրաբարը մեր ժամանակակից բոլոր բարրառներից էլ հին է, նրանցից ավելի շատ է պահպանել հին գծեր և իր խոսակցական ձևով այդ բարրառներից շատերի բաղմամբով առանձնահատկությունների սաղմերի կրողն է»⁴։

Կասկածից վեր է, որ հայերենի ժամանակակից ոչ մի բարբառ չի կարող իր արդի վիճակով ավելի հին լինել, քան զրաբարը, որովհետև վերջինս զրի առնվելով շորրորդ դարի վերջերին կամ հինգերորդ դարի սկզբներին՝ պահպանել է այն վիճակը, որը ունեցել է այդ ժամանակ, իսկ ժամանակակից բարբառները, իբրև ժողովրդի խոսակցական լեզուներ, անընդհատ փոփոխվել ու կատարելագործվել են, հարստացել են նոր բառերով ու փերականական ձևայիններով, որոնք չեն ունեցել հինգերորդ դարում։ Հետևաբար, սխալ է հայերենի բարբառների արդի վիճակի իրողությունները նկատի ունենալով՝ պնդել, թե նրանք զրաբարից հին չեն։ Սխալ է նաև պնդել, թե հայերենի արդի բարբառները իրենց որոշակի տարրերով ձևավորվել են մեր թվականությանից առաջ, երկրորդ հազարամյակում, այսինքն՝ այն ժամանակ, երբ կաղմավորված չէր ոչ հայ էթնոսը և ոչ էլ հայոց էթնիկական լեզուն։ Բայց այդ չինշանակում նաև, թե հայերենը մեր թվականության հինգերորդ դարում չի ունեցել իր բարբառները։

Հայ լեզվաբանական դրականության մեջ այդ հարցը քննության են առել մի շարք մասնագետներ և հենվելով զրաբարի բնական փաստերի ու հինգերորդ դարի հայ մատենագիրների վկայությունների վրա, համոզիչ կերպով ցույց են տվել, որ հայերենը հինգերորդ դարում, ինչպես նաև դրանից առաջ, երբ հանդես է եկել իբրև ժողովրդական լեզու, ունեցել է իր բարբառները, որոնք զարգացման երկար շրջան անցնելով՝ փոփոխվել են այն աստիճան, որ կորցրել են իրենց սկզբնական ընդհանրության ու բարբառային առանձնահատկությունների շատ գծերը։

Հինգերորդ դարում հայ բարբառների ղոյության մասին հավաստի վկայություններ ունեն V դարի հայ մատենագիրները։ Հինգերորդ դարի մատենագիր

¹ Հմմտ. Է. Ալալյան, նշվ. հոդվածը, էջ 226—227։

² Հմմտ. Գ. Սևակ, նշվ. հոդվածը, էջ 244։

³ Հմմտ. Գ. Զահուկյան, նշվ. հոդվածը, էջ 312։

⁴ Նույն տեղում։

եղնիկը տարբերում է երկու բարբառ՝ ստորենայց և իր բարբառը, ցույց տալով նրանց բառապաշարի միջև եղած տարբերությունները. «Յորժամ մեք ասեմք թէ սիք շնչէ, ստորենայք ասեն՝ այս շնչէ»¹:

Հինգերորդ դարի մի այլ պատմիչ՝ Կորյունը, խոսելով իր ուսուցիչ Մաշտոցի կատարած աշխատանքի մասին, նշում է. որ Վաղարշապատից ոչ շատ հեռու բնակված Մարաց կողմերի հայերը «ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղադոթեան, այլև վասն խեցրեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին»²:

Մ. Խորենացին իր պատմության մեջ խոսելով Արամի նվաճումների մասին՝ ասում է, որ նա հրամայում է իր զրափած աշխարհի բնակիչներին՝ «Ուսանել զխաւսս և զլեզուս հայկական»³: Իսկ Եւր Վերաբտաղրում է հայոց զրերի ստեղծման հետ առնչված զեպրերը՝ զրում է, որ «մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն՝ Հարել անուն կոչեցեալ. խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր»⁴: Ինչպես տեսնում ենք, ժամանակի մեծագույն պատմիչ Խորենացին տարբերում է լեզուներ և խոսվածքներ (հայերէն լեզուս և խօսս), որոնք ուղղակիորեն վկայում են հինգերորդ դարում հայերենի բարբառների գոյությունը:

Հայերենի բարբառների գոյության մասին ավելի որոշակի են խոսում Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանիչը և այդ քերականության մեկնիչները: Նրանք նկատի ունենալով Դիոնիսիոս Թրակացու քերականության բնագրում հիշատակված հունարեն բարբառները և նրանցից բերված օրինակները՝ աշխատել են դրանց մասին գաղափար տալ հայերենի բարբառներից վերցրած նմուշներով: Թրակացու քերականության հայ թարգմանիչը հունարեն բնագրի «Յաղագս անուան» պարագրաֆի Ἰνδῆσιν բառի փոխարեն զրել է հայերեն Գորգայից անունը, որը ցույց է տալիս, որ այդ ժամանակ հայերը զանազանում էին Գորգայից բարբառը, որի մասին Դավիթ փիլիսոփան իր մեկնության մեջ գրում է. «Եւ գաղափարք հայրանուանցն, որպէս թէ անուն որդույն զառաջին վանդն ի հաւրն անուանէ ունիցի. իբր ի Բարայ՝ Բարգէն և ի Սամայ՝ Սամեան. ըստ որում և Գորգայիցն գաղափար է, զի որպէս զոքա ծեփելով ի հոմանուն լեզուէ ի խաւսս, նմանապէս և ի հոռոմին՝ Դովրացի իմն անուանեալ լեզու»⁵:

Դավիթ փիլիսոփայի այս վկայությամբ հաստատվում է, որ Գորգայից բարբառը հայտնի է եղել ինչպես հինգերորդ, նույնպես և ավելի ուշ շրջանի հայ մատենագիրներին: Սակայն ոչ միայն այդ: Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչները իմացել են նաև, որ բարբառները առաջանում են միևնույն լեզվից (ծեփելով ի հոմանուն լեզուէ ի խաւսս) և ունեն իրենց բառապաշարային ու հնչյունական առանձնահատկությունները, ինչպես Մանէճ բառի Մանայճ տարբերակը, Անանուն մեկնիչի վկայությամբ նաև շնչեղ բաղաձայնների խլացման ու խուլերի շնչեղացման երևույթներ. «Այլ էր իսկ ճըշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ»⁶:

¹ Եղնիկ. Եղծ աղանդոց, 1914, էջ 63:

² Կորյուն. Վարբ Մաշտոցի, 1941, էջ 54:

³ Մ. Խորենացի. Պատմութիւն հայոց, 1913, էջ 50:

⁴ Նույն տեղում, էջ 333:

⁵ H. A. Д. Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 14:

⁶ Նույն տեղում, էջ 104—105:

⁷ Նույն տեղում, էջ 149:

Հայ քերականներից մի ուրիշը՝ Ստեփաննոս Սյունեցին, ավելի որոշակի է խոսում հայ բարբառների մասին. նա իր «Մեկնութիւն քերականին» աշխատության «Ճաղագս քերականութեան» գլխում պատմելով լեզուների ուսումնասիրության մասին՝ գտնում է, որ յուրաքանչյուր լեզվի այս կամ այն հարցը պարզելու համար անհրաժեշտ է օգտագործել ինչպես հարևան ժողովուրդների լեզուների, նույնպես և միևնույն լեզվի բարբառների տվյալները. կոնկրետացնելով իր խոսքը հայերենի շուրջը, ասում է. «Եւ դարձեալ դրո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զլեզերականս, որսկէս զԿորճայն և զՏայեցին և զԽոթլային և զԶորբորդ-Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. ալլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի սխտանիք այսոքիկ են, ալլև ազտակարբ ի պատմութիւնսն. զի մի՛ վրիպեացի անընդել զոլով լեզուացն»¹:

Պատմական վերահիշյալ փաստերը հիմք են տալիս ասելու, որ հայերենը հինգերորդ դարում ունեցել է իր բարբառները: Բայց այդ փաստերից բացի հինգերորդ դարի գրական լեզվի իրողությունները նույնպես խոսում են բարբառների գոյության օգտին:

Ամենից առաջ պետք է նշել, որ հինգերորդ դարի գրական հայերենի բառապաշարը ուներ այնպիսի փաստեր, որոնք վկայում էին նրանց բարբառային ծագման մասին. այդ փաստերից են.

ա) Միևնույն հասկացությունը տարբեր բառերով արտահայտելու հանգամանքը, որի մասին, ինչպես տեսանք, հիշատակություն ունի հինգերորդ դարի մատենագիր Եղնիկը:

բ) Հայերենի բարբառներում պահպանված են մի շարք բառեր, որոնք իրենց ծագումով ալիլի հին են, քան հինգերորդ դարի հայերենը, բայց չեն արձանագրվել այդ շրջանի հայ մատենագիրների կողմից: Այդ բառերից մի քանիսը, ինչպիսիք են՝ անծեղ, կաշաղակ, ջամուկ, հաբեաճ բառերը քննում է պրոֆ. Հ. Աճառյանը և նշում, որ դրանք շատ հին ծագում ունեն, թեև չեն հանդիպում հինգերորդ դարի մատենագիրների գործերում:

գ) Գրաբարի քերականության տվյալները ևս խոսում են բարբառների գոյության օգտին. այսպես՝ միևնույն բառի տարբեր հոլովումների ենթակիցվելը, ի-ա, ո-ա խառն հոլովումների փաստը, բայերի զուգահեռ ձևերը և այլն հնարավոր է, որ տարբեր բարբառների ազդեցության արտահայտությունը լինեն գրաբարում:

դ) Բառերի հնչյունական տարբերությունները, ինչպես, օրինակ՝ ձայնեղ հնչյունների խլացման և խուլերի շնչեղացման դեպքերը, որի մասին հիշատակություն ունի Անանուն մեկնիչը, և ձայնավորի ու արտասանությունը, որը մենք տեսնում ենք Ստ. Սյունեցու գործերում և այլն, նույնպես խոսում են հայերենի բարբառների գոյության օգտին՝ հինգերորդ դարում:

Հիշատակված փաստերը նկատի ունենալով՝ մենք պաշտպանում ենք այն տեսակետը, ըստ որի հայերենը հինգերորդ դարում ունեցել է իր բարբառները, որոնք դրաբարի կողքին շարունակել են իրենց գոյությունը և զարգացել ու կատարելագործվել են, իսկ դրաբարը պահպանվել է այն վիճակով, որը մենք տեսնում ենք հինգերորդ դարի գրականության մեջ: Նրանում կատարված փոփոխությունները պայմանավորված են եղել գլխավորապես բարբառների ազդեցությամբ: Զի բացառվում նաև օտար լեզուների ներգործությունը, որը իրրեւ ընդհանուր կանոն, արտահայտվել է բառապաշարի մեջ:

¹ Ն. Աղոնց, Նշվ. աշխ., էջ 187:

Յ

Հայերենի արդի բարբառները, ինչպես ճիշտ կերպով նշել է պրոֆ. Գ. Ջահուկյանը, չէին կարող ծագել գրաբարից, որովհետև գրաբար տերմինի տակ հասկանում ենք ռաբբինական հայերենը, իսկ գրական լեզուն չի կարող սկիզբ տալ բարբառների, եթե գրաբար ասելով հասկանանք նույնիսկ հին շրջանի ընդհանուր լեզուն՝ իր նորմավորված գրական և խոսակցական տարբերակներով, ասկա աչն իր խոսակցական ձևով դարձյալ չի կարող դիտվել որպես հետագա քուրթ բարբառների մայրը»¹։

Հայ ժողովուրդը զարգացման տարրեր շրջաններ ու հասարակական տարրեր ֆորմացիաներ է ասլրել։ Բնական է, որ նրա զարգացման յուրաքանչյուր շրջանը ունեցել է լեզվական որոշ վիճակ, իր համակարգը բնորոշող առանձնահատկություններն ու իր բարբառները, որոնք չէին կարող միևնույն ծագումն ունենալ։ Ամենից առաջ հայ էթնոսի մեջ մտած ցեղերի լեզուներն ու բարբառները թե իրենց հաղորդակցական ֆունկցիայով, թե՝ լեզվական առանձնահատկություններով տարբեր են եղել, թեև նրանց միջև պահպանված են եղել ցեղակցական որոշ ընդհանրություններ, որոնք նույնպես փոփոխվել են հայ ժողովրդի զարգացման ընթացքում։

Սովետական լեզվաբանության մի շարք ներկայացուցիչներ իրենց հետազոտություններում ցույց են տվել, որ հասարակության զարգացման վաղ շրջանում հասարակության հիմնական կորիզը հանդիսացող ցեղերը, ազգաբնակչության բաժանման հետ, անընդհատ բաժանվել են և նոր ցեղերի, բարբառների ու լեզուների սկիզբը դրել։ Նրկար ժամանակ տեղող այդ պրոցեսը, որը տարբեր երկրամասերում ունեցել է իր առանձնահատկությունները, և որը Ֆ. Էնգելսը անվանել է բաժանման միջոցով նոր ցեղերի ու լեզուների առաջացման պրոցես, ստեղծել է աղբակից բաղմամբով ցեղեր ու լեզուներ, որոնք թեև իրենց մեջ սնել են ժամանակակից լեզուների սաղմերը, բայց էսպես տարբերվել են նրանցից։ Աղբակցական կապերով կապված աղբրական այդ ցեղերը հետզհետե տարածվելով լայնարձակ տերիտորիաների վրա և խաչավորվելով տարբեր ծագում ունեցող ցեղերի հետ, համակենտրոնանալով ու նորից բաժանվելով՝ կապվել են նոր ցեղերի ամբողջ խմբեր, որոնց լեզուները աչնքան են հեռացել իրենց սկզբնական վիճակից, որ ոչ միայն անհասկանալի են դարձել, այլև, Ֆ. Էնգելսի խոսքերով ասած, անհետացել է ճերանց սկզբնական միասնության համարյա ամեն մի հետք։

Տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հարաբերությունների առաջացման հետ կազմավորվել են ժողովուրդներ և էթնիկական լեզուներ, որոնք ժառանգել են ժողովրդի հիմքում ընկած ցեղի կամ ցեղային միության լեզվի ընդհանուր հատկանիշները, բայց իրենց հաղորդակցական ֆունկցիայով ու զարգացածության աստիճանով տարբերվել են ինչպես էթնոսի լեզվի մեջ ձուլված, նույնպես և այդ լեզվի հիմքում ընկած լեզուներից։ Էթնիկական լեզվի ու բարբառների միջև ստեղծվել են նոր հարաբերություններ. իրրե ընդհանուր կանոն ուժեղացել է ընդհանուր լեզվի ներգործությունը բարբառների վրա և դանդաղել է բարբառներից նոր լեզուներ առաջանալու ընթացքը։

¹ Գ. Ջահուկյան, նշվ. հոդվածը, էջ 312։

Սակայն ժողովուրդների, ինչպես նաև էթնիկական լեզուների կազմավորման օրինաչափությունները ամենուրեք միակերպ չեն դրսևորվել:

Հայ ժողովրդի կազմավորման պատմությունը նկատի ունենալով՝ կարող ենք հաստատապես ասել, որ հայերենի բարրապատության որոշ մասը առաջացել է հայ ժողովրդի մեջ ձուլված ցեղերի լեզուների հիման վրա՝ մեր թվականությունից առաջ VIII—II դարերի ընթացքում: Այդ, ինչպես նաև հայ ժողովրդի բաժանմամբ գոյացած բարրապատությունը չեն նույնացել հայ ժողովրդի մեջ խմբավորված ցեղերի լեզուների կամ բարրապատության հետ: Սրանից հետևում է, որ հայերենի բարրապատության գոյությունը պետք է ընդունել այն ժամանակվանից, երբ կազմավորվել է հայ ժողովուրդը և ձևավորվել հայ էթնիկական լեզուն: Չի կարելի խոսել հայ ժողովրդից առաջ եղած հայերեն բարրապատության, որովհետև այդպիսիք չէին կարող լինել: Իսկ նախահայկական ցեղերի և ցեղախմբերի լեզուներն ու բարրապատությունները միայն իրենց ծագումնաբանական որոշ առնչակցություններով կարող են հարակցվել հայ էթնիկական լեզվի ու նրա բարրապատության հետ: Չի կարելի նաև անվերապահորեն ընդունել, որ «նախաֆեոդալական շրջաններում գոյացած բարրապատությունը ոչ մի լեզվում որևէ ժամանակ չեն վերացել, որովհետև հաջորդող ֆեոդալիզմը նոր, պարարտ հող է ստեղծել բարրապատության զարգացման և մանրացման համար, նոր ճյուղավորումների համար և այլն»¹: Մենք կարծում ենք, որ ֆեոդալական հասարակարգում միշտ չէ, որ առաջանում են նոր բարրապատություններ կամ մանրանում են եղած բարրապատությունն ու կազմում նոր ճյուղավորումներ: Հայտնի է, որ Կիլիկյան թագավորության հայ բնակչությունը գոյացել է Հայաստանի տարրեր շրջաններից՝ Վասպուրականից, Անիից, Կարսից, Գանձակից և այլ վայրերից: Կիլիկիա գաղթած հայ ժողովրդի տարրեր բարրապատություն խոսող հատվածներից: Այդ բարրապատությունը ձուլվել են Կիլիկիայի բարրապատության և անհետ կորել: Այդ փաստը ցույց է տալիս, որ ֆեոդալիզմի շրջանում ոչ միայն ստեղծվում են նոր բարրապատություն, այլև պատմական նպաստավոր պայմաններում նրանք կարող են համակենտրոնանալ և նոր բարրապատության հնարավորություն տալ: Հայերենի Իբրիսի, Պոլսի, Առտիալի և ուրիշ բարրապատությունները ուշ շրջանում ձևավորված այնպիսի բարրապատություններ են, որոնք իրենց մեջ ձուլել են այլ բարրապատություններ և չեն կարող զետեղվել այն սխեմայի մեջ, որը դրել է պրոֆ. Ա. Ղարիբյանը: Այդ փաստերը վկայում են այն մասին, որ բարրապատության առաջացման ու զարգացման հարցերը քննելիս չի կարելի հաշվի չառնել պատմությունը այն ժողովրդի, որը ստեղծել է իր լեզուն ու բարրապատությունը: Իսկ հայ ժողովրդի պատմությունը ցույց է տալիս, որ հայերենի արդի բարրապատությունը առաջացել են տարրեր ուղիներով և պատմական տարրեր շրջաններում:

Հայերենի բարրապատության մի մասը, ինչպես ասվեց, ձևավորվել է հայ ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանում և հետագայում ձևափոխվելով ու զարգանալով հասել է մինչև մեր ժամանակները: Առանձին բարրապատություններ և բարրապատության որոշ խմբեր առաջացել են ավելի ուշ շրջանում, հինգերորդ դարից հետո, իհարկե ոչ զրարարից, այլ ժողովրդի խոսակցական լեզվի կամ բարրապատության հիման վրա և նույնպես հասել են մինչև մեր օրերը: Հնարավոր է, որ հայերենի որոշ բարրապատություններ ձուլվելով հայոց խոսակցական լեզվին կամ օտար

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարրապատության ծագման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 242:

լեզուների, անհետ կորել ու պատմական ասպարեզից դուրս են ընկել և այլն:

Այսպիսով, հայերենի բարբառների առաջացման հարցերին, մեր կարծիքով, ճիշտ են մոտենում այն հետազոտողները, որոնք ընդհանուր սխեմաներ չեն ստեղծում հայերենի բոլոր բարբառների համար և նրանցից յուրաքանչյուրը քննում են պատմական կոնկրետ իրադրությունը նկատի ունենալով: Ժամանակակից հայերենի բարբառներից ոչ մեկը իր համակարգով և նույնիսկ բնույթով չի կարող նույնանալ մեր թվականությունից մեկ կամ երկու հազարամյակ առաջ հանդես եկած ցեղերի լեզուներից կամ բարբառներից և ոչ մեկի հետ և համարվել նրանց ժառանգը, որովհետև այդ շրջանում դեռևս կաղամպորված չէր հայ ժողովուրդը և, հետևաբար, գոյություն չունեին ո՛չ նրա լեզուն և ո՛չ էլ բարբառները:

Տեսականորեն կարելի է ենթադրել միայն, որ արդի հայերենի բարբառների առանձին իրողություններ, հատկապես բառապաշարային և հնչյունական որոշ տարրեր, ավելի հին ծագում ունեն, բայց այդ բանը հաստատելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ աշխատանք՝ հենված ոչ միայն լեզվական, այլև պատմական ու հնագիտական փաստերի վրա:

4

Հայերենի բարբառների առաջացման հարցը հենելիս վերոհիշյալ, ինչպես նաև «Вопросы языкознания» հանգեսի 1959 թ. 6-րդ համարում տպագրված հոդվածներում խոսվում է հայերենի բարբառների և հնդեվրոպական հիմք-լեզվի հնչյունական համակարգերի առնչակցությունների մասին: Պրոֆ. Ա. Ղարիբյանը գտնում է, որ հայերենի «բարբառների հնչյունական սիստեմը իր գոյությունը պահպանել է հնդեվրոպական վիճակից սկսած», որ «գիտության մեջ ընդունված տեսակետը, թե հայերեն լեզուն իր պայթական բաղաձայնական համակարգում ունեցել է բոլոր շարքերի մի լրիվ տեղաշարժ, ճիշտ է միայն գրաբարի և «Մ» ճյուղի բարբառների մեծ մասի նկատմամբ: Այս պատճառով էլ բարբառներում ստեղծվել են բաղաձայնական տարրեր համակարգեր: Մեր հետազոտությունը ցույց է տվել, որ բոլոր բարբառները միասնաբար տեղաշարժել են՝ հնդեվրոպական խուլերը շնչեղ խուլերի շարքը, իսկ մյուս շարքերի նկատմամբ տեղաշարժը կատարվել է ալլաձայն կերպով: Այսպես շուրջ տասներկու բարբառներ պահպանել են հնդեվրոպական շնչեղ ձայնեղները (bh, dh, gh), շուրջ քսանյոթ բարբառներ պահպանել են անփոփոխ հնդեվրոպական ձայնեղները, և վերջապես, շուրջ տասնհինգ բարբառներ հնդեվրոպական շնչեղ բաղաձայնները վերածել են խուլերի կամ շնչեղ-խուլերի, իսկ տասը բարբառներ էլ ձայնեղները վերածել են խուլերի: Այս ալլաձայնությունից երևում է, որ հայերեն բարբառներից տասներկուսը պահպանել են հնդեվրոպական բաղաձայնական համակարգը համարյա անփոփոխ վիճակում, մինչդեռ գրաբարը տեղաշարժել է: Նշանակում է նրանք ներկայացնում են բաղաձայնական համակարգի ավելի հին վիճակ, քան գրաբարի վիճակն է»¹:

Փարիզի համալսարանի պրոֆ. Ժ. Ֆուրկեն հայերենի բարբառների մասին արտահայտված վերոհիշյալ կարծիքը համարելով գիտական խոշոր նշանակություն ունեցող հայտնադործում՝ անում է մի շարք լուրջ դիտողություններ²,

¹ «Պատմա-ոճապիրական հանդես», 1958, № 3, էջ 244—245:

² Հմտ. «Вопросы языкознания», 1959, № 6, էջ 63—77:

որոնց հաշվառումը շատ բան կարող է փոխել այն եղրակացությունների մեջ, որոնց հանգել է սլրոֆ. Ա. Ղարիբյանը իր հողվածներում: Մյուս հողվածագիրները, օգտագործելով հայերենի ընձեռած փաստերը, գտել են, որ ժամանակակից բարբառներից և ոչ մեկի հնչյունական կաղմը գրաբարից ավելի արխայիկ, հետևաբար հնդեվրոպական հիմք լեզվին նրանից ավելի մոտ չինել չի կարող:

Բարբառների հնչյունական կաղմի ձևափոխման ու զարգացման հարցերը քննելիս ևս մեր կարծիքով սկստք է սլատմական ու կոնկրետ մոտեցում ցուցաբերել հնչյունական յուրաքանչյուր իրողությունն նկատմամբ: Լեզվի հնչյունական կաղմը, ինչպես հայտնի է, ավելի դանդաղ է փոխվում, քան քերականությունը: Այդ սլատճառով էլ հնարավոր է, որ հայերենի բարբառների հնչյունական կաղմի մեջ սլահսլանված լինեն այնպիսի արխայիկ գծեր, որոնք, ինչպես նշել է սլրոֆ. Գ. Ջահուկյանը, ավելի մոտ լինեն հնդեվրոպական կամ փոխատու աղբյուրներին¹ և ավանդված չլինեն գրաբարում: Սակայն այդ արխայիկ գծերը հայտնաբերելու համար անհրաժեշտ է երկար և խորադնին աշխատանք, որը մինչև այժմ չի կատարված:

Պրոֆ. Ա. Ղարիբյանի հետադոտությունները և օգտագործած փաստերը, ինչպես նաև հնդեվրոպական լեզվի հնչյունական համակարգին նման համակարգ ունեցող հայերեն բարբառների հնչյունական կաղմի այն սլատկերը, որը ուրվագծել է նա, հարուցում են մի շարք առարկություններ, որոնցից մենք կուզենայինք նշել հետևյալները:

ա) Հայերենի բարբառների հնչյունական և քերականական կառուցվածքի ձևավորման վերջնական ժամանակաշրջանը սլրոֆ. Ա. Ղարիբյանը համարում է մեր էրայից առաջ երկրորդ հաղարամյակը: Բայց, ինչպես արդեն նշել ենք, այդ շրջանում դեռևս հայ ժողովուրդը կաղմավորված չէր, հետևաբար չունեի իր ընդհանուր լեզուն և բարբառները: Հնարավոր է, որ հայ էթնիկական լեզվի հիմքում ընկած լեզուները, որոնք անկասկած կենդանի և խոսակցական էին այդ շրջանում, իրենց հնչյունական համակարգի առանձնահատկությունները ժառանգած լինեն հայերենին, որը կաղմավորվել է մեր թվականությունից առաջ V III—II դարերում: Սակայն ալգ դեպքում նույնպես անհրաժեշտ է սլարդել, թե այդ լեզուները ինչպիսի առնչակցությունների մեջ են եղել հարևան լեզուների հետ, արդյո՞ք նրանք չեն ենթարկվել նրանց ուժեղ աղղեցությանը, սլատմական ինչպիսի սլայմաններում են գործել այդ լեզուները և բաղմամբիվ ալգ խնդիրներ, որոնց լուծմամբ միայն կարելի է հաստատ խոսել լեզվական այն վիճակի մասին, որ ունեցել են հայերենին նախորդող ցեղային լեզուները:

բ) Իրենց հնչյունական կաղմով հնդեվրոպական հիմք լեզվին մոտ համարված բարբառների մի մասը սլատմականորեն ավելի ուշ շրջանում է առաջացել: Այդ հանդամանքը հիմք է տալիս կասկածանքի տակ առնելու հնդեվրոպական շնչեղ-ձայնեղների գոյության հարցը այդ բարբառներում:

գ) Հայերենի բարբառների հնչյունական կաղմը շատ խայտարդետ է: Նրանց մեջ ընդհանուրը և միասնականը այն է, որ, ինչպես նշել է սլրոֆ. Ա. Ղարիբյանը, յուրը բարբառները տեղաշարժել են հնդեվրոպական խուլերը շնչեղ խուլերի շարքը, իսկ շնչեղ-ձայնեղ, ձայնեղ և խուլ հնչյունները ոչ բոլոր բարբառներն են, որ հավասարապես սլահսլանել են: Նրանցից մի մասը չունի

¹ Հմմտ. «Պատմա-քանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 313:

սլարվ խուլ հնչյուններ, այն ժամանակ, երբ ունի խուլ-շնչեղներ: Այս երևույթը չի բացատրված: Մեր կարծիքով խուլ-շնչեղ հնչյունների առկայությունը բարբառներում ենթադրում է նաև խուլների գոյությունը, որովհետև չէր կարող ստեղծվել որևէ բարդ հնչյուն՝ առանց այն կազմող բաղադրիչների առկայության:

դ) Եթե ընդունենք, որ հայերենի աբղի բարբառները մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակում գոյություն են ունեցել, ապա այդ բարբառները պետք է համարել առանձին, ինքնուրույն լեզուներ, որոնք շարունակվում են մինչև մեր օրերը, ինչպես կարծել է Ք. Պատկանյանը: Սակայն այդ տեսակետը վաղուց հերքվել է և դրան այժմ անդրադառնալու առիթ չկա, թեև սրբ. Ա. Ղարիբյանի պնդումները այդ հարցը վերստին արծարծելու հիմք են տալիս:

ե) Պրոֆ. Ա. Ղարիբյանը առաջ քաշելով մի շարք բարբառների հնչյունական համակարգի ինքնուրույնության, հնդեվրոպական հիմք-լեզվից անմիջապես բխած լինելու խնդիրը՝ չի քննում այդ բարբառների և գրաբարի առնչակցությունների հարցերը և չի պարզում, թե ինչու՞ գրաբարը, որը հայերենի բոլոր բարբառներից ավելի վաղ է գրի առնվել, չի պահպանել կամ չի արտացոլել այն բարբառների հնչյունական համակարգի իրողությունները, որոնց հետ սերտ շփման մեջ է գտնվել: Մենք հատկապես նկատի ունենք Արարատյան բարբառը, որը, ինչպես նշել է սրբ. Ա. Ղարիբյանը, պահպանել է հնդեվրոպական հիմք լեզվի բաղաձայնների քառաստիճան համակարգը: Այդ բարբառի և գրաբարի հնչյունական համակարգերը չէին կարող նման չլինել մեր թվականության հինգերորդ դարում, որովհետև պատմական բոլոր փաստերը խոսում են այդ բարբառի հիման վրա գրական հայերենը մշակելու օգտին: Եթե Արարատյան բարբառը պահպանել է հնդեվրոպական հիմք-լեզվի բաղաձայն հնչյունների համակարգը, ապա այն պետք է որոնել նաև գրաբարում: Եվ եթե սրբ. Ա. Ղարիբյանին հաջողվի ցույց տալ, որ գրաբարը նույնպես ունեցել է բաղաձայն հնչյունների քառաստիճան համակարգ, ինչպես Արարատյան բարբառը, բայց գրավոր հիշատակարաններում այդ արտացոլվել է այլ պատկերով, ապա այն ժամանակ հայերենը ոչ միայն ուսումնասիրության նոր աղբյուր կդառնա, այլև հնարավորություն կտա պարզելու հնդեվրոպական հիմք-լեզվի հնչյունական համակարգի զարգացման հետ կապված և մինչև այժմ գեոլերջնականապես չսլարվարանված շատ հարցեր:

Սակայն «Արարատյան բարբառի զանազան հատվածներում,—ինչպես նշում է սրբ. Ա. Ղարիբյանը,— այժմ նկատվում են հնչյունական տարբեր օրինաչափություններ: Այսպես՝ Քանաքեռի խոսվածքում բառասկզբի բաղաձայնական համակարգը երկաստիճան խլաղուրկ է, էջմիածնի խոսվածքում՝ համարյա եռաստիճան է, իսկ Աշտարակը, Փարպին, Լոռին հավատարիմ են Երևանի բարբառի հիմնական հատկանիշներին: Այդպես է առավել ևս Բայազետի ենթաբարբառը, որի արտասանության մեջ քառաստիճան համակարգը խիստ ցայտուն է»¹: Մինևույն բարբառի տարբեր խոսվածքների հնչյունական այդ զանազանությունները, այնուամենայնիվ, չեն խոսում նրանց հնդեվրոպական հիմք-լեզվից ժառանգած լինելու օգտին:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 247:

դ) Հեղվական բոլոր այն փաստերը, որ բերվել են բարրառների և հնդկվորոպական հիմք-լեզվի հնչյունական համակարգերի նույնությունը ցույց տալու համար, միակողմանի են, որովհետև նրանց մեջ նկատի են առնված միայն բառասկզբի հնչյունները, այսինքն՝ կոնկրետ բառերի հնչյունական կազմը, որը խաբուսիկ կարող է լինել, քանի որ յուրաքանչյուր բառ ժողովրդի զարգացման ընթացքում կարող է բազմաթիվ անգամ ձևափոխությունների ենթարկվել իր ներսում, առանց ազդելու լեզվի հնչյունական համակարգի վրա: Դրանից հետևում է, որ միայն լեզվի բառերի ուշ շրջանի հնչյունական ձևավորումը նկատի ունենալով՝ չի կարելի որոշել լեզվի հնչյունական համակարգի ավելի վաղ շրջանի վիճակի առանձնահատկությունները: Այստեղ, ավելի քան որևէ այլ դեպքում, պետք է հաշվի առնել պատմական փաստերը: Այսպես, Ղարաբաղի բարբառի պիւեւ, վանի՝ պիւեւ, Ուրմիայի՝ պէւէլ, կամ Ղարաբաղի՝ տօնը, վանի՝ տօն. Ուրմիայի՝ տուր բառաձևերով չի կարելի որոշել հնդկվորոպական ոչ bher և ոչ էլ dūr բառերի սկզբնական պատկերը, եթե նկատի չառնվեն այն միջանկյալ օղակներ, որոնցով անցել են այդ բառերը: Այդ բանը վերաբերում է նաև փոխառված բառերին. այսպես, օրինակ՝ վանի բարբառի պազուկ, Ուրմիայի պազուք, Խոյի՝ պազուք կամ վանի՝ պաւակ, Ուրմիայի՝ պարակ՝ Ղարաբաղի՝ պարակ բառաձևերով չի կարելի ճիշտ կերպով վերականգնել այդ բառերի պաշտպանական hazuk և barak սկզբնական պատկերը՝ առանց դրանց ավելի հին ձևերը նկատի առնելու: Լեզվի կատարած փոխառությունների հնչյունական կազմը նկատի ունենալով, անկասկած, հնարավոր է խոսել ժողովրդի որոշ շրջանի արտասանական բաղայի մասին, բայց միայն այն դեպքում, եթե այդ փոխառված բառերի հնչյունական կազմի և լեզվի հնչյունական համակարգի միջև կան լրիվ համապատասխանություններ: Եթե փոխառված որևէ բառի մեջ որոշ դիրքում պահպանված է փոխատու լեզվի այս կամ այն հնչյունը, իսկ այլ դիրքերում փոփոխված է, մեր կարծիքով այդպիսի երևույթները հիմք չեն տալիս խոսելու ընդհանրապես լեզվի արտասանական բաղայով պայմանավորված հնչյունների զոյություն մասին: Այդ նշանակում է, որ միայն բառի հնչյունական կազմը նկատի ունենալով չի կարելի լեզվական հաստատուն օրինաչափություններ սահմանել:

է) Պրոֆ. Ա. Ղարիբյանը իրավացիորեն պահանջում է լեզվի պատմության հարցերը լուծելիս զգույշ լինել: Բայց նրա մի շարք ձևակերպումների մեջ այդ պահանջը հաշվի չի առնված: Նա իր տեսակետը ապացուցելու համար գրում է. «Միջին հայերեն լեզուն, որ հիմնված է կիրիկյան բարբառախմբի վրա, ունի տեղաշարժ տեղափոխության համակարգ: Արեմտահայ գրական լեզուն, որ հիմնված է Պոլսի բարբառախմբի վրա, ունի բաղաձայնական համակարգի երկաստիճան խլազուրկ համակարգ, իսկ արևելյան գրական լեզուն, հիմնված լինելով «Ում» ճյուղի բարբառախմբի վրա, ունի եռաստիճան բաղաձայնական համակարգ: Եվ ահա դաճակ բառը միջին հայերենով լինում է տանազ, արեմտահայ գրական լեզվով՝ րանազ, իսկ արևելահայ գրական լեզվով՝ դանախ¹: Մի կողմ թողնելով այն հարցը, թե ինչպես մեր գրական լեզուները հիմնված լինելով առանձին բարբառախմբերի վրա՝ չեն պահպանել նրանց հնչյունական օրինաչափությունները և հնչյունական համակարգը, նշենք, որ պրոֆ. Ա. Ղա-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1938, № 3, էջ 250:

քիբրյանի պնդումը գրական լեզուների հիմքի բարբառների մասին, հակադրության մեջ է գտնվում ընդունված տեսակետների հետ: Այսպես, օրինակ՝ միջին հայերենը կիլիկյան բարբառախմբի վրա հիմնված լինելու նրա թեզը լեզվական և պատմական փաստերով չի հաստատվում: Փաստերը ցույց են տալիս, որ միջին հայերենը իր հիմնական առանձնահատկություններով ձևավորվել է անիական շրջանում և օգտագործվել է հայ գեղարվեստական ու գիտական գրականության և վիճական արձանագրությունների մեջ առաջին հերթին բուն Հայաստանում և միայն հետագայում, երբ ստեղծվել է կիլիկյան հայկական թագավորությունը, դարձել է պետական-պաշտոնական լեզու և ավելի կատարելագործվել ու հղկվել է՝ յուրացնելով նաև կիլիկյան բարբառի որոշ իրողություններ: Իսկ արևմտահայ գրական լեզուն, ինչպես նշել է Հ. Աճառյանը, իր սկիզբը առել է շատ վաղուց և ավելի սերտ առնչակցություններ ունի միջին հայերենի, քան Պոլսի բարբառի հետ, որը ունի բաղաձայնական եռաստիճան համակարգ, թեև մեր մասնագիտական գրականության մեջ համարված է երկաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ: Այսպես, պրոֆ. Հ. Աճառյանը իր «Քննություն Պոլսահայ բարբառի» աշխատության մեջ գտնում է, որ խուլ հնչյուններից կ-ն հատկապես ս, շ, խ խոսքերից հետո պահպանվում է փ, օրինակ՝ աշկերդ, հասկընալ, գրսկիձ, օսկի, պատկերի¹, նաև՝ ճերմակացած>ջերմրկծած, էրիկմարդ>էրիկմարք, փակչիլ>փակնիլ, հոկտեմբեր>հոկտեմփեր²: Պ-ն խուլ բաղաձայնից, մանավանդ ս-ից հետո ունի խուլ պ հնչյունը, ինչպես՝ ըսպաննել, իսպիղազ, դապկել, դրպծունել³: Երբ տ-ն միանում է որևէ ուրիշ բաղաձայնի հետ, ստանում է խուլ տ հնչյունը, ինչպես՝ զատկովան, սատկիլ և այլն⁴:

Միջին հայերենի բաղաձայն հնչյունների երկաստիճան համակարգի մասին մեր մասնագիտական գրականության արտահայտած կարծիքները նույնպես պետք է ընդունել վերապահությամբ: Մենք կարծում ենք, որ միջին հայերենը պահպանել էր գրաբարի հնչյունական համակարգը իր ընդհանուր դժբերով, եթե նկատի չունենանք բառերի հնչյունական կազմի մեջ կատարված փոփոխությունները: Միջին դարերի հայ մատենագրության մեջ արտացոլվել են բարբառային հնչյունափոխության կանոնները, և այդ պատճառով էլ միևնույն հնչյունը առանձին բառերի մեջ հաճախ հանդես է եկել տարբեր գրությամբ, որը վկայում է այդ շրջանի բարբառների, և ոչ թե գրական լեզվի հնչյունական համակարգի մեջ կատարված փոփոխությունների ու տեղաշարժերի մասին:

5

Հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը, որը տվել է պրոֆ. Ա. Ղարիբյանը, բարբառների ուսումնասիրության բնագավառում Սովետական Հայաստանում կատարված աշխատանքի ամենամեծ նվաճումը պետք է համարել: Հ. Աճառյանը հիմք է դրել հայ բարբառների գիտական ուսումնասիրությանը, որը ճշտվում ու զարգացման նոր թափ է ստանում Սովետական Հա-

¹ Հ. Աճառյան, Քննություն Պոլսահայ բարբառի, 1941, էջ 50:

² Նույն տեղում, էջ 52:

³ Նույն տեղում, էջ 68:

⁴ Նույն տեղում, էջ 74:

յաստանում: Պրոֆ. Ա. Ղարիբյանի հետազոտություններով նոր աստիճանի է բարձրանում հատկապես բարբառների հնչյունական համակարգի ուսումնասիրությունը, և նոր հեռանկարներ են բացվում հայերենի պատմության շուրջ՝ վաթ հարցերի պարզաբանման առաջ: Սակայն, պրոֆ. Ա. Ղարիբյանի բարբառագիտական ուսումնասիրությունները կատարված են առանց ձայնագրական գործիքների օգտագործման, այդ պատճառով էլ դրանց եզրակացությունների մեջ կարող են յուրջ փոփոխություններ կատարվել, եթե հայերենի բարբառների հնչյունաբանությունը ուսումնասիրվի ժամանակակից տեխնիկայի նվաճումները հաշվի առնելով:

Մինչև այժմ պրոֆ. Ա. Ղարիբյանի կատարած ուսումնասիրությունները պարզել են, որ հայերենի բարբառները իրենց հնչյունական համակարգերով բաժանվում են յոթ խմբերի:

Առաջին խմբի մեջ մտնում են այն բարբառները, որոնք պահպանել են հնդեվրոպական բաղաձայնների ամբողջ համակարգը, բացի խուլերից, այսինքն՝ հնդեվրոպական bh, b, p, ph, dh, d, t, th, gh, g, k, kh հնչյունների փոխարեն ունեն bh, b,— ph, dh, d,— th, gh, g,— kh, հնչյունները: Այդ խմբի մեջ պրոֆ. Ա. Ղարիբյանը դասում է Արարկիրի, Ակնի, Շապին-Գարահիսարի, Սերաստիայի, Համշենի բարբառները, որոնց մի մասը ունի խուլ հնչյուններ: Այսպես՝ Համշենի բարբառում բ-ն որոշ խոսվածքների առանձին բառերում արտասանվում է պ. օրինակ՝ բանալ>պօնուշ, բերել>պլուշ, բոց>պէօց, պօց, բրինձ>պրինձ¹. դ-ն հանդես է գալիս դն, դ, տ տարբերակներով, ինչպես՝ դառնալ>դիտունուշ, տառնուշ, դառնուշ, դուք>դիոնեմ, սուեմ, դուեմ, դնել>դիմնուշ, տնուշ, դնուշ². բ-ն կարող է տալ տ, ինչպես՝ թասել «հեմալ»>տաստուշ, մորթել>մօշտուշ, երթալ>էշտուշ³. կ-ն բառամիջում, խուլ բաղաձայններին (հատկապես ս-ին) պատահալիս արտասանվում է կ. ինչպես՝ վախկոտ>վախկօղ, ոսկի>օսկի, հասկանալ>ոսսկրնուշ⁴: Այդպես նաև մյուս խուլ հնչյունները որոշ կապակցությունների մեջ պահպանում են իրենց որակը, իսկ շնչեղ-խուլ-հնչյունները վերածվում են խուլերի: Խուլ հնչյունները իհարկե որոշ դիրքերում արտասանվում են ձայնեղ, բայց բառի հնչյունական պատկերը իրավունք չի տալիս ժխտելու բարբառի հնչյունական կազմում եղած հնչյունները:

Բարբառների երկրորդ խումբը, ինչպես նշում է պրոֆ. Ա. Ղարիբյանը, պահպանել է հնդեվրոպական շնչեղ-ձայնեղների շարքն ամբողջությամբ և առաջին տեղաշարժի օրենքը կատարել է հնդեվրոպական պարզ խուլերի և պարզ ձայնեղների նկատմամբ միայն բառասկզբին. օրինակ՝ հնդկ. bhrgu>բիանցր, lendh>պիմդ, pob>օղ (ոտ), dig>տիգ, dek'm>տասը⁵: Հայերեն բարբառների այս խմբի մեջ են մտնում Կենտրոնական Հայաստանի (Գարին, Մուշ, Արարատ, Դիատին, Ողմ, Զուղա) բարբառները: Այդ խմբի բարբառների հնդեվրոպական *b, *d, *g բաղաձայններին համապատասխանող հնչյունները, ինչպես նշել է ժ. Ֆուրկեն, ունեն արտասանական տարբեր՝ խուլից (սկզբնական դիրքով) մինչև ձայնեղ (բառամիջում) նրբերանգներ: Հնչյունաբանության համար ձայնեղությունը իրեն հասկացություն դրություն ունի,

¹ Հմմտ. Ղ. Աճառյան, Քննություն համշենի բարբառի, էջ 41:

² Նույն տեղում, էջ 43:

³ Նույն տեղում, էջ 46:

⁴ Նույն տեղում, էջ 80:

⁵ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 3:

րայց հնչյութաբանության տեսակետից ձայնեղությունը մի շարք բաղաձայնների որոշիչ հատկանիշը չի կարող լինել¹։ Այս դիտողության հաշվառումը կարող է փոխել հայերենի մի շարք բարբառների շնչեղ-ձայնեղները հնդեվրոպական համապատասխան հնչյունների հետ կապելու վարկածը։

«Բարբառների երրորդ խումբը, — գրում է պրոֆ. Ա. Ղարիբյանը, — հնդեվրոպական պարզ խուլերը, հայերենի բոլոր բարբառների նման տեղաշարժել է շնչեղ խուլերի շարքը, իսկ հնդեվրոպական շնչեղ ձայնեղները՝ պարզ ձայնեղների շարքը, և դրա հետևանքով առաջացել է մի բաղաձայնական համակարգ, որը բաղկացած է ձայնեղներից և շնչեղ խուլերից։ Ըստ որում այս խմբի ձայնեղները ներկայացնում են հնդեվրոպական պարզ ձայնեղները նույնությամբ և հնդեվրոպական շնչեղ ձայնեղները՝ տեղաշարժված ձայնեղների կարգը»²։ Այսպես, օրինակ՝ bher>բէրեմ, bend>բինդ, dhur>դուր, dek'm>դաս, tor>թոն, g²hom>գոմ, g²alakt>գաթ, ka²r>բար։ Այս խմբի մեջ են դասվում Srապիզոնի, Եվդոկիայի, Նոր Նախիջևանի, Պոլսի, Մարաշի բարբառները։

Սակայն, պրոֆ. Ա. Ղարիբյանի եզրակացությունը այս խմբի բարբառների հնչյունական համակարգի մասին, հակասում է մի շարք ուսումնասիրողների տված փաստերին։ Ինչպես արդեն նշեցինք, պրոֆ. Հ. Աճառյանի վկայությամբ սլոխահայ բարբառը մի շարք դեպքերում պահպանում է խուլ հնչյունները ինչպես հնդեվրոպական, նույնպես և փոխառված բառերում, օրինակ՝ մոռացկոտ>մուսակոդ, մոռացկոդ, մեղքանալ>մէխլընալ, մէխլ>մեխկ, աղդ>ասկ, բշտել>բշտէլ, սատակիլ>սատկիլ և այլն։

Բարբառների չորրորդ խումբը, որի մեջ մտնում են Զեյթունի, Հաջինի, Սվեդիայի, Քեսարի, Բեյլանի, Արամոյի, Քարուսիի բարբառները, կատարել է հնդեվրոպական պարզ խուլերի տեղաշարժ, ինչպես նաև հնդեվրոպական շնչեղ ձայնեղների տեղաշարժ երկու անգամ՝ դարձնելով նրանց պարզ ձայնեղ, ապա խուլ։ Նա անփոփոխ պահպանել է հնդեվրոպական պարզ ձայնեղների ամբողջ շարքը³, տալով bh>p, b>b, ph>ph, dh>t, d>d, th>th, gh>k, g>g, kh>kh պատկերը։ Օրինակ՝ Բեյլանի բարբառում, բան>պոն, դու>տուն, պապ>բոբ, տանձ>դոնձ⁴, Սվեդիայի բարբառում՝ բերան>պիրուն, դանակ>տանուկ, ձաղ>ծուկ, պապ>բուր, տանձ>դունձ, կարմիր>գարմէր⁵ և այլն։

Ձայնեղ հնչյունների իւլացման և խուլ հնչյունների, որոնց թվում նաև խուլ շնչեղների ձայնեղացման բազմաթիվ արտահայտությունների մենք հանդիպում ենք միջնադարյան հայ գրականության տարբեր ժանրերի գործերում, օրինակ՝ «Զոմանս ի ծով ընկղմեց և դոմանս արևիլեաց աքսորս» (Շ. Բագրատունի, Պատմութիւն, էջ 4), «Նայ շինեալ զամրոցն ար (առ) արն (աին) Խորհան գետոյ» (նույն տեղում, էջ 4), «Զի պատուական բայտ (փայտ) Խաչին դտանիցէ թէ ուր է» (նույն տեղում, էջ 8)։ «Եւ չգաւորեցաւ (չլաւորեցաւ) 'Իերեն» (նույն տեղում, էջ 41)։ «Իբրեւ երեզալեան (երեբալեան) իմն մրրկեալ տաւտանեալ ծփէր» (Ժն դարի հայ ձեռ. հիշատակարաններ, էջ 51), «Յորժամ ընդերնուր (ընթեռ-

¹ „Вопросы языкознания“, 1959, № 6, էջ 73։

² «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 32—33։

³ Նույն տեղում, էջ 33։

⁴ „Вопросы языкознания“, 1959, № 5, էջ 85։

⁵ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 419։

⁶ Նույն տեղում, էջ 433։

նութ), ձեր մարրափայլ աղաթթա յիշէր» (նույն տեղում, էջ 70)։ Օտար բառերի տառադարձության մեջ նույնպես զգացվում է այդ խայտարհետությունը. օրինակ՝ blaid բառը տառադարձվել է բլայթ (դատարանում պաշտպանվելը, սոփեստություն, կեղծություն), conse — զամեզ, զունգ (կոմս), commun — զուֆին (համայնք, հասարակություն), prince — բրինձ (պրինց) և այլն։

Հայ միջնադարյան գրականության մեջ պահպանված վերոհիշյալ և բազմաթիվ այլ փաստերը արդյո՞ք չեն խոսում հենց միջնադարում հայ բարբառների հնչյունաբանության մեջ կատարված տեղաշարժերի մասին։

Բարբառների հիմնգերոց խումբը, բաղկացած եղեսիայի, Տիգրանակերտի, Ծալաթիայի բարբառներից, ունի բաղաձայնական ք-փ, դ-ք, ց-ֆ համակարգը, որի ձայնեղները, ինչպես հավաստում է պրոֆ. Ա. Ղարիբյանը, հնդեվրոպական ձայնեղների հետ նույնն են և ուրեմն պահպանված են հարադատությամբ, օրինակ՝ bendh > բինդ, dek'm > դասք, g²alakt > գաթ¹։ «Շնչեղ-խուլերը առաջացած են հնդեվրոպական պարզ խուլ հնչյուններից մեկ տեղաշարժով և հնդեվրոպական շնչեղ-ձայնեղներից՝ երեք տեղաշարժով, երբ շնչեղ ձայնեղները վերածվում են ձայնեղների, ապա խուլերի և հետո շնչեղ խուլերի, bher > her > per > փերեմ, dhur > dur > tur > թուռ, g²hom > gom > kom > քոմ։ Այս երեք տեղաշարժերը կարող են տեղի ունենալ մեկ ակտով, թեև մենք պայմանականորեն այդ պատկերացնում ենք որպես երեք տեղաշարժ»²։ Այդ խմբի բարբառների հնչյունական համակարգը, պրոֆ. Ղարիբյանի կարծիքով, առաջացել է չորրորդ խմբի հնչյունական համակարգից խուլերի շարքը խուլ-շնչեղների տեղաշարժելու հետևանքով։ Սակայն հիմք չկա, ինչպես նկատել է Ֆուրկեն, կարծելու, թե բարբառների հիմնգերոց խմբի հնչյունական համակարգը առաջացել է չորրորդից մաքուր խուլերը խուլ-շնչեղների փոխվելու եղանակով։ Այդ երկու խմբի բարբառների հնչյունական համակարգը, ոչ առանց հիմքի, Ֆուրկեն կապում է առաջին խմբի բարբառների համակարգի հետ, որի մեջ շնչեղ ձայնեղ հնչյունները խլանալու միտում են ունեցել։

Հայերենի բարբառների վեցերորդ խմբի մեջ պրոֆ. Ղարիբյանը դասավորում է Ղարաղաղի, Մեղրիի, Կարճեանի, Դիմարի, Թրիլիսիի, Արդվինի բարբառները, որոնք մի անգամ տեղաշարժել են հնդեվրոպական բաղաձայնները, որի հետևանքով ստացել են զրաբարին նման հնչյունական համակարգ. այսինքն՝ հնդեվ. bh, b, p, ph, dh, d, t, th, gh, g, k, kh հնչյունների դիմաց ունենւ, պ, փ, դ, կ, ք, դ, տ, թ հնչյունները։ Վերջիններս, պրոֆ. Ա. Ղարիբյանի կարծիքով, առաջացել են կամ հին հայերենի հնչյունական համակարգի առաջացման հետ միաժամանակ, կամ շարունակում են հին հայերենի համակարգի զարգացման ընթացքը։ Սակայն ինչպես էլ առաջացած լինի այդ բարբառների հնչյունական համակարգը, այնուամենայնիվ այն կապվում է հին հայերենի հետ և ցույց է տալիս, որ զրաբարը կազմավորվել է ժողովրդական խոսակցական լեզվի հիման վրա և հիմնգերոց դարում, եթե չի խոսվել ամբողջ Հայաստանում, համենայն զեպս հասկանալի է եղել ամբողջ հայ ժողովրդին։

Բարբառների յոթերորդ խումբը, որի մեջ մտնում են Ղարաղաղի, Շամախու, Թավրիզ-Մոզդուկի, Հադրութի, Շաղախի, Ուրմիայի, Մարաղայի, Խոյի և Վանի բարբառները, պրոֆ. Ա. Ղարիբյանի կարծիքով, ունի հնչյունական

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 33։

² Նույն տեղում։

այնպիսի համակարգ, որ բաղկացած է միայն խուլ և խուլ շնչեղ հնչյուններից և զրարարի հնչյունական համակարգի զարգացման հետևանք է: Բայց այդ խմբի մեջ մտցված բարբառներից մի քանիսը, հակառակ պրոֆ. Ղարիբյանի պնդմանը, ունի նաև ձայնեղ հնչյուններ, օրինակ՝ Վանի բարբառում, ինչպես ցույց է տվել պրոֆ. Հ. Աճառյանը, մ-հնչյունից հետո և արևելյան լեզուներից փոխառված բառերում ր-ն մնում է ր. ինչպես՝ բաղ > բոտ, բաղէ > բողո, բախտ > բոխտ, բակլալ > բոլլու, բարտի > բորդի, ամբար > տմբոր, բամբակ > պոմբոկ, բամբասել > պոմպոսել¹: Նոր փոխառությունների մեջ դ-ն մնում է ղ, ինչպես՝ դարման > դուրման, դե > դէվ: Բառամիջում, ոնդային հնչյուններից հետո, պահպանվում է դ-ն, ինչպես՝ անդունդ > անդունդք, գերանդի > կէրընդի, հիւանդանալ > խիվընդնալ (նշվ. աշխ., էջ 58) և այլն:

Նույն երևույթը մենք տեսնում ենք նաև Ուրմիայի բարբառում, օրինակ՝ բախտ > բախտ, բակլալ > բոլլու, բեղ > բէդ, բեմ > բէմ, ամբար > ամբար, թումբ > թումբ, բամբասել > պամբասել, վազր > վազու, եղունգն > եղունդ (նշվ. աշխ., էջ 34), դաստա > դոստոտ, դարդ > դաոդ, դիւան > դիվան (նույն տեղում, էջ 35) և այլն:

Հենց պրոֆ. Ա. Ղարիբյանի վկայությամբ, «Ղարաբաղի բարբառն ունի գրական լեզվի բոլոր հնչյունները, բացի ֆ-ից, որի փոխարեն գործ է ածվում փ» (Հայ բարբառագիտություն, էջ 235): Եթե այդպես է, ապա էլ ինչպես է նա մտնում բարբառների այն խմբի մեջ, որոնք ունեն միայն խուլ և խուլ-շնչեղ հնչյուններ:

Բերած օրինակները ցույց են տալիս, որ առանձին բառերի հնչյունական կազմը նկատի ունենալով չի կարելի պնդել, թե հիշյալ խմբի մեջ մտած բարբառները անվերապահորեն ունեն միայն խուլ և խուլ-շնչեղ հնչյուններ: Մենք այստեղ չենք խոսում այդ բարբառների շատ սովորական քմայնացած հնչյունների մասին, որոնց հաշվառումը նույնպես կարող է հնչյունական նոր երևույթներ նկատելու հիմքեր տալ:

Նրեի վերոհիշյալ հակասություններն է նկատի ունեցել պրոֆ. Ժ. Ֆուրկեն, երբ գրել է, թե մենք չենք կարող բավարարվել առանձնացած շարքի «երկրորդ տեղաշարժի» (1 > 1) ընդունմամբ: Գարելի է, իհարկե, ենթադրել ձայնեղներից զուրկ սուբստրատ, նաև այնպիսի վիճակ, երբ ձ-ն վերածվել է փա- փուկ խուլ ձ-ի: Բայց կարելի է ենթադրել նաև ավելի հավանական հիպոթեզ: Երրորդ տիպարում մաքուր ձայնեղները (հնգեվրոպական երկու շարքին համապատասխանող ձայնեղները) հանդիպողոված են խուլ-շնչեղներին: Այդպիսի տիպարում շնչեղացումը կարող է դառնալ տարբերակման հիմնական հատկանիշը, իսկ ըստ ձայնեղության եղած տարբերությունը կարող է կորչել, և ձայնեղները կարող են վերածվել փափուկ խուլների: Այդպիսի երևույթ է տեղի ունեցել դանիերենում XIV դարում. ժամանակակից դանիերենում bil:pil զույգում հանդիպողոված են փափուկ խուլ (bil) և շնչեղ (phil) հնչյունները, շվեդերենում հանդիպողոված են փափուկ ձայնեղ և շնչեղ (b:ph) հնչյունները, որոնք հանդիսանում են հին վիճակի ժառանգությունը, այնպես, ինչպես մենք գտնում ենք երրորդ խմբում³:

¹ Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, 1953, էջ 53, 54:

² Մ. Ե. Ասատրյան, Ուրմիայի բարբառի հնչյունաբանությունը, Երևանի համալսարանի հանդես, 1958, էջ 33:

³ Տե՛ս «Вопросы языкознания», 1959, № 6, էջ 76:

Եթե ձայնեղների խլացման և ասլա շնչեղացման երևույթներ միջին դարերում նկատվում են հնդեվրոպական այլ լեզուներում, ինչու այդ չի կարող տեղի ունենալ նաև հայերենի բարբառներում:

Իր ուսումնասիրություններում պրոֆ. Ա. Ղարիբյանը հայերենի բարբառների հնչյունական համակարգի հետ կապված հարցերը քննում է գլխավորապես հենվելով առանձին բառերի հնչյունական կազմի, այն էլ՝ մեծ մասամբ բառասկզբի հնչյունների ընձեռած փաստերի վրա: Նա հաշվի չի առնում այն հանգամանքը, որ հնդեվրոպական հիմնալեզվում շնչեղ-ձայնեղ հնչյունները հանդես են եկել ինչպես բառասկզբում, նույնպես և բառամիջում ու բառավերջում, իսկ հայերենի բարբառներում նրանք երևում են միայն բառասկզբում: Եթե ընդունենք, որ շնչեղ ձայնեղները հայերենում գիտակցվել են իրեն առանձին հնչույթներ, ասլա նրանք հայերենի բառերում պետք է պահպանված լինեին բոլոր դիրքերում, իսկ եթե այդ երևույթը համարյա թե չի արձանագրվում մեր բարբառներում, ուրեմն կասկածանքի տակ է առնվում նաև նրանց հնչույթային որակը: Հայերենի բարբառների հնչյունական կազմի ձևավորման ընթացքը, ինչպես նկատված է նաև մյուս հոգվածագիրների կողմից, պրոֆ. Ա. Ղարիբյանը պատկերացնում է առանց շեղումների, ուղիղ գծով: Մինչդեռ լեզուների դարգացման մեջ դեր են կատարում բաղմամբիվ գործոններ, որոնց ազդեցությամբ իրենց ընթացքից հաճախ դուրս են գալիս ոչ միայն լեզվի առանձին բաղադրիչները, այլև լեզուն՝ ամբողջությամբ առնված: Պրոֆ. Ա. Ղարիբյանը իր եզրակացությունները հանելիս երբեմն մոռանում է նաև հնչյունական երևույթների առաջացման կոնկրետ, բառի կազմի մեջ հնչյունի գրաված տեղով, հնչյունների բարդացման ու պարզացման, միացման ու տրոհման օրինաչափություններով և հարևան ժողովուրդների լեզուների ազդեցությամբ պայմանավորված հնչյունական փոփոխությունները և բաղմամբիվ այլ հարցեր, որոնք որոշիչ դեր են կատարել հայերենի բարբառների հնչյունական համակարգերի ձևավորման ու դարգացման մեջ:

Այդ հարցերի բաղմակողմանի լուսարանությունը ղգալի չափով կարող էր կրճատել այն առարկությունների թիվը, որոնք հարուցվում են հայերենի բարբառների հնչյունական համադարպի մասին պրոֆ. Ա. Ղարիբյանի արտահայտած կարծիքների և իր դրվածքով հենց վերին աստիճանի ուշադրավ այն վարկածի դեմ, որով նշվում են հայերենի բարբառների և հնդեվրոպական հիմք լեզվի հնչյունական վերոհիշյալ իրողությունների առնչակցությունները:

6

Հայերենի բարբառների հնչյունական և քերականական համակարգում, ինչպես նշեցինք, կարող են պահպանված լինել լեզվական այնպիսի երևույթներ, որոնք ավելի հին լինեն, քան զրաբարի իրողությունները: Մակայն, ամբողջությամբ վերցված մեր արդի բարբառներից և ոչ մեկը զրաբարից հին չէ՝ ոչ թե նրա համար, որ առաջացել է զրաբարից կամ զրաբարի համակարգի լեզվից, այլ այն պատճառով, որ դրի է առնված այն ժամանակ, երբ մի քանի հասարակարգ է ասլրել և դարգացման երկար շրջան է անցել:

Մենք հավանական ենք համարում այն կարծիքը, ըստ որի զրաբարը ձևավորվել է որևէ բարբառի կամ բարբառների հիման վրա: Պրոֆ. Ա. Ղարիբյանը վիճարկելով այդ տեսակետը՝ գտնում է, որ զրաբար լեզուն իր՝ մեզ հայտնի

որակը «ստացել է երկրորդ դարից և պահպանել մինչև հինգերորդ դարը, հաս-
ցրելով V դարում իր ներքին օրենքների զարգացման գագաթնակետին, որից
այն կողմ, ինչպես ճիշտ կերպով դիտել է մեծանուն հայագետ Հ. Աճառյանը,
սկսում է զրաբար լեզվի դասական համակարգի քայքայումը»¹։ Մենք կարծում
ենք, որ ոչ մի, առավել ևս գրական լեզվի համակարգ չի կարող քայքայվել։ Նա
կարող է հարստանալ, որակապես փոփոխվել, մահանալ, բայց ոչ երբեք քայ-
քայվել։ Դրավոր լեզուները պահպանում են իրենց զարգացման բոլոր էտապ-
ների այն վիճակը, որը զրի է առնվում պատմական տվյալ շրջանում, հետևա-
բար այդ վիճակի քայքայման, որոշ առումով նաև զարգացման մասին խոսք
լինել չի կարող։ Այդպես է պատահել նաև գրաբարի հետ։ Նա արձանագրվելով
հինգերորդ դարում՝ պահպանվել է անփոփոխ ձևով, մինչդեռ նրա հիմքում
լնկած բարբառը կամ բարբառները անընդհատ զարգանալով ու փոփոխվելով՝
ավելի ու ավելի են հեռացել հինգերորդ դարի իրենց վիճակից։ Հայ ժողովրդի
պատմական կյանքը սպասարկել է այդ տարբերությունների խորացմանը, որը
հանգեցրել է զրաբար լեզվի անհասկանալի դառնալուն։

Վերոհիշյալ հոգվածներում կողմնակիորեն արծարծված են հայոց լեզվի
պատմության և հնչյունաբանության հետ առնչակցված մի շարք այլ հարցեր։
Դրանցից մեկը այսպես կոչված միջբարբառային լեզվի հարցն է, որը պրոֆ.
Ա. Ղարիբյանի կարծիքով եղել է ամենակոնսերվատիվ և բոլորին ավելի հաս-
կանալի²։ Այդ միջբարբառային լեզուն, այն բանի հետևանքով, որ հայերը մե-
կուսացած առանձին խմբերով էին ապրում, ցրված «մեծ ու փոքր կղզիներով
այլացեղ կոլեկտիվների մեջ»³, մեր թվականությունից առաջ «առաջին հաղա-
րամյակում ամբողջ Հայաստանում վերածվել էր միջցեղային լեզվի և՛ հայերի
համար, և՛ օտարների համար»⁴։ Այդ լեզուն «պահպանում էր հնդեվրոպական
նախալեզվի ընդհանուր հիմքերը, դա այն լեզուն էր, որ երկարատև գործած-
վելով իրեն միջցեղային ընդհանուր լեզու, ձևավորվեց որպես գրաբարասիս-
տեմ լեզու»⁵։ Պրոֆ. Ա. Ղարիբյանի այս պնդումը պատմական և լեզվական
որևէ փաստով ապացուցել հնարավոր չէ և եթե նույնիսկ ճիշտ լինի, հակա-
դրվում է այն կարծիքներին, որոնք արտահայտել է հարգելի պրոֆեսորը հա-
յերենի բարբառների և գրաբարի մասին։ Եթե գրաբարի հիմքում ընկած այս-
պես կոչված միջցեղային լեզուն ավելի կոնսերվատիվ է եղել և հնդեվրոպա-
կան նախալեզվի հիմքերը պահպանած, ապա նրա ժառանգը՝ գրաբարը, բնա-
կանաբար, ավելի մոտ պետք է լիներ հնդեվրոպական հիմնալեզվին։ Բայց
պրոֆ. Ղարիբյանի աշխատանքի հիմնական սլաքը ուղղված է այդ ըմբռնման
դեմ, բարբառները հնդեվրոպական հիմնալեզվին ավելի մոտ լինելու վարկածը
հաստատելու կողմը։

Սակայն այդ հարցը տվյալ դեպքում երկրորդական նշանակություն ունի
Պրոֆ. Ա. Ղարիբյանը առաջ քաշելով միջբարբառային և միջցեղային լեզուներ-
ի գոյացման հարցը այնպիսի պայմաններում, երբ, նրա խոսքերով ասած,
հայերեն խոսողները մեծ ու փոքր կղզիներով ապրում էին այլացեղ կոլեկտիվ-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 255։

² Նույն տեղում, էջ 260։

³ Նույն տեղում, էջ 261։

⁴ Նույն տեղում։

ների մեջ, սլաշտսլանում է այնպիսի տեսակետ, որը ապացուցելու համար ո՛չ պատմական և ո՛չ էլ լեզվական փաստեր կարող է գտնել:

Այնուհետև, պրոֆ. Ղարիրյանը գտնում է, որ գեո մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակի վերջերին հայ առանձին ցեղեր կամ նրանց ամբողջական հատվածներ անցնելով նփրատը և պայքարելով ժամանակի ուժեղ պետությունների դեմ ու ապա առանձին տոհմերով կամ ընտանիքների առանձին խմբերով ցրվելով սլաշտսլան շայաստանի տերիտորիայում, ունենալ այն առավելությունը, որ ոչ միայն կարողացել էին իրենց լեզուն դարձնել միջցեղային, այլև պահպանել այդ լեզուն այն վիճակով, որ «երբ հայերի գլխավոր ուժերը IX, VIII—VII դարերում անցան նփրատը, նրանք ամենուրեք գտան իրենց լեզվով խոսողների, այդ պատճառով էլ շայաստանի տերիտորիայի խաղաղ նվաճումը տեղի ունեցավ բավական արագ»¹: Մենք չենք կարծում, որ ավելի քան հազար տարի իրարից բաժան-բաժան ապրած ցեղերը կարողանային ձևափոխել այնպիսի հատկանիշ, որ ոչ միայն պահեն իրենց գոյությունը ու բարրաճող անվիթար, այլև ստեղծեն միջցեղային լեզու, որը պահպանվելու ավելի քան հազար տարի և հասկանալի մնար տարրեր ժամանակներում շայաստան եկած հայերի համար: Ինչպե՞ս կարող է պատահել, որ տոհմատիրական կարգերի ժամանակ, երբ, էնդելսի խոսքերով ասած, ցեղն ու լեզուն համընկել են, ստեղծվեր միջցեղային ընդհանուր լեզու, իսկ $r - X$ դարերում, ընդամենը չորս հարյուր տարվա ընթացքում և այն էլ այն պայմաններում, երբ հայ ժողովուրդը իր ամբողջությունը և լեզուն պահպանելու ուժեղ զգացում ունեն, ստեղծել էր իր գիրն ու հարուստ գրականությունը, — այդ ընդհանուր միջցեղային լեզուն, որ գրական լեզվի աստիճանի էր բարձրացել, անհասկանալի դառնար և մահացած դատապարտվեր: Պրոֆ. Ա. Ղարիրյանը այդ երկփուլյա բացատրում է նրանով, որ «բայթայվեց զբարարով խոսող հասարակությունը, շայաստանի մայրաքաղաքները քանդվեցին, բնակչությունը ցրվեց. առանձին նոր ոստաններ կաղմվեցին, որոնք և՛ փոքր լինելով, և՛ ընդհանուր կապերից զուրկ լինելով՝ իրենց լեզվով ենթարկվում էին բարբառների խիստ ազդեցության»²: Շայ ժողովրդի պատմական կյանքում կատարված փոփոխությունները անկասկած ազդեցին զբարարի անհասկանալի դառնալու վրա, բայց հայ հասարակությունը չբայթայվեց: Իսկ եթե այդ ասվում է միայն նկատի ունենալով հայ ֆեոդալիզմի զարգացումը կամ հայ ժողովրդի մասնատումը, ապա մեր թվականությունից մի հազարամյակ առաջ, ինչպես ինքը՝ պրոֆ. Ղարիրյանն է նշում, հայկական ցեղերը ցրված էին տոհմերով և ընտանիքների խմբերով, հետևաբար ավելի մասնատված էին և չէին կարող ստեղծել միջցեղային լեզու և այնպես պահպանել այն, որ հազար տարի հետո հասկանալի լինեք այն կոլեկտիվների համար, որոնք ապրում էին միանգամայն տարբեր պայմաններում և առանձնացած վիճակում:

Միջցեղային լեզուների առաջացման ու զարգացման, պետական ու գրավոր լեզու դառնալու տեսակետը այնպիսի նորություն է հայ լեզվաբանական գիտության համար, որ հաստատվել և հայ ժողովրդի հետ կապվել չի կարող: Նա հիմնված է միմիայն ենթադրությունների վրա, որոնք շուրջ են պատմական հիմքից, թեև ներկայացվում են խիստ պատմական շղարշով:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 261:

² Նույն տեղում, էջ 263:

7

Ամփոփելով, մենք կարծում ենք, որ հայերենի բարբառների առաջացման հարցը չի կարելի քննել առանց նկատի ունենալու հայ ժողովրդի գոյացման ու զարգացման պատմությունը: Բարբառները հայ ժողովրդական լեզվի ճյուղավորումներն են, հետևաբար նրանք դրանից առաջ կազմավորված լինել չէին կարող: Իսկ հայ ժողովուրդը, ինչպես ցույց են տվել պատմական մի շարք ուսումնասիրություններ, կազմավորվել է մեր թվարկությունից առաջ VIII—II դարերում: Հայերենի բարբառների մի զգալի մասը կազմավորվել է այդ շրջանում և հայ ժողովրդի զարգացման հետ փոփոխվել ու զարգացել է: Հայերենի որոշ բարբառներ առաջացել են ավելի ուշ՝ հայ ժողովրդական լեզվի տրոհման կամ այդ լեզվին ձուլված այլ լեզուների հիման վրա: Ժամանակակից բարբառներից և ոչ մեկը հայ ժողովրդից առաջ գոյություն չի ունեցել իրեն հայերենի բարբառ:

Հայերենի բարբառները թեև չեն առաջացել դրաբարից, բայց իրենց արդի վիճակով նրանից հին չեն, որովհետև նույնիսկ նրանց այն մասը, որ կազմավորվել է հինգերորդ դարից առաջ, անընդհատ փոփոխվել ու զարգացել է, ձեռք բերելով նոր հատկանիշներ և հեռանալով ոչ միայն իր սկզբնական վիճակից, այլև գրաբարից, որին հինգերորդ դարում ամենայն հավանականությամբ ավելի մոտ է եղել, քան ավելի ուշ շրջանում:

Հայերենի բարբառները հայ ժողովրդի կյանքում կատարված տեղաշարժերին զուգընթաց կրել են տարբեր տեսակի փոփոխություններ: Իրեն ընդհանուր կանոն նրանք ավելի կոնսերվատիվ են եղել իրենց հնչյունական համակարգը և բառապաշարի որոշ շերտեր (դերանունները, թվական անունները, ընտանիք, ընտանեկան հարաբերություններ, բնական և բուսական աշխարհի երևույթներ արտահայտող բառերը), քան քերականության համակարգը սլահականելու մեջ: Ժամանակակից բարբառների քերականությունը զարգացման մի շարք էտապներ է անցել, իսկ հնչույթային կազմը այդ շրջանում համարյա թե անփոփոխ է մնացել:

Հայոց լեզվի զարգացման այդ առանձնահատկությունը նկատի ունենալով կարելի է տեսականորեն ընդունել, որ բարբառների որոշ մասի հնչյունական համակարգի մեջ սլահականված լինեն այնպիսի արխայիկ տարրեր, որոնք չեն գրանցվել գրաբարում. և ոչ թե նրա համար, որ այդ տարրերին անծանոթ են եղել հինգերորդ դարի մեր մատենագիրները, այլ որովհետև դրանք դիտվել են իրեն մասնակի, հնչույթի արժեք շունեցող և բառի արտասանական առանձնահատկության հետ կապված երևույթներ: Եթե հնարավոր լինի պարզել, որ հինգերորդ դարի գրական հայերենը ունեցել է շնչկ-ձայնկ հնչյուններ, բայց դրանք չեն արձանագրվել միայն նրա համար, որ շնչկությունը հնչույթները տարբերարկելու հատկանիշ չի համարվել, հնարավոր կլինի ավելի հաստատ խոսել ժամանակակից բարբառների և հնդեվրոպական հիմնալեզվի համապատասխան հնչյունների կապի մասին:

Եթե նույնիսկ հաստատվի, որ ժամանակակից բարբառների հնչյունական համակարգը իր մի շարք տարրերով ավելի արխայիկ է, քան հին հայերենի հնչյունական համակարգը, այդուամենայնիվ այդ հիման վրա չի կարելի սլահեղել, թե հայերենի բարբառները անմիջապես կապվում են հնդեվրոպական հիմնալեզվի հետ: Քանի դեռ չի հաստատված հայերենի բարբառների անկախ

լեզու լինելու, մեր կարծիքով, ամեն մի հիմքից զուրկ վարկածը, չի կարելի հայերենի արդի բարբառները բխեցնել հնդեվրոպական հիմնալեզվից, կամ նկատի ունենալով նրանց հնչյունական համակարգը՝ որոշել հայ ժողովրդի կազմավորման ու տարածման պատմության հարցերը:

ОБ АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ И ИХ ПРОИСХОЖДЕНИИ

С. К. КАЗАРЯН

(Р е з ю м е)

В многочисленных исследованиях арменистов, начиная с XIX столетия, были выдвинуты и успешно решены многие вопросы армянской диалектологии. Но некоторые проблемы, как, например, вопрос о происхождении армянских диалектов, не получили своего многостороннего решения.

Представители сравнительно-исторического языкознания, опираясь на факты письменного древнеармянского языка, предполагали, что армянские диалекты являются позднейшими видоизменениями грабара (древнеармянского литературного языка), что армянские говоры не содержат почти ничего такого, что предполагало бы сохранение индоевропейских особенностей, не известных классическому армянскому языку.

В своих статьях, напечатанных в «Историко-филологическом журнале» и в «Вопросах языкознания», проф. А. С. Гарибян, отвергая это предположение, утверждает, что большинство основных армянских диалектов возникло очень давно, в более древний период, чем сам древнеармянский язык, а часть из них сохранила индоевропейское наследие звонких придыхательных.

Нам кажется, что мнение проф. А. С. Гарибяна о древности этих звуков армянских диалектов не доказано, хотя и не лишено основания, если имеется в виду тот факт, что система фонемы языка более устойчива, чем его словарный состав и грамматика. Выдвинутые проф. А. Гарибяном столь важные вопросы возможно многосторонне осветить только в том случае, если вместе с языковыми фактами будут использованы исторические данные и факты некоторых древних мертвых языков, находившихся в тесной связи с армянским языком.

А. С. Гарибян развивает мысль о том, что армянские диалекты в основном оформились в конце второго и начале первого тысячелетия до нашей эры. Это утверждение противоречит историческим данным. Армянский народ и язык армянской народности, как известно, образовались в VIII—II столетиях до н. э. Понятно, что до этого армянские диалекты не могли существовать, ибо они не древнее народа, создавшего их. Современные армянские диалекты являются продуктом разных периодов. Часть из них образовалась в VIII—III столетиях до н. э., а другие возникли в более поздние времена. Но как те, так и другие диалекты, находясь в процессе непрерывного развития, видоизменялись и приобретали новый характер. Настоящим своим состоянием они не древнее грабара.